առաջին գիրսն, որ պատասխանի միւս կողմի արզոնն, զամենայն Յակոբն ընդ իւր պահէ, եւ եկեալ ասա զերկու թուղթն բացաւ, որ պատճէն ասացաւ։

Դշի օրս (30 Յունուար) եկն Յակոբն առ Եղիազար վարդապետն եւ մեք անդ գոլով խօսին ընդ նա. եւ ասաց. Յորժամ[1]) գրեցին քեզ բանադրանս՝ և ես պատառել տուի. և սոքա ըսկսան թէ Վասն էր և զի՞նչ ինասուց. և Վարդապետն ևս ասէ թէ Վասն ի՞մ բանադրէր զսայ՝ ասա՛յ զվասն. եւ հանեալ ետ թուղթ մի՝ թէ Սիրելի Տէր Մարտիրոս սուրբ հայրն մեր քեզ բազում սէր ցոյց ետ. ահա լսեմ որ զայն մոռացեր ես. քեզ կու պատուիրեմ որ՝ թէ զսուրբ հօրն մեր զաւրհնութիւն կամիս եւ զմեր սէրն ի քեզ բեւեռել, յամենայն սրտէ քումմէ[2]) և յամենայն զօրութենէ և յամենայն մտաց քոց թիկունք եւ թեւ լինիս։ Մինչ ի տեղս կտրած էր թուղթն եւ ի լուսանցքն գիր որ ոչ էր նման գրոյն և բանին, թէ Ժողովրդեան և խաղաղութեան, քանզի լուեալ եմ յամենայն խարդախութեանց մէջն գտանիս։ Երեկոյիս եմուտ Եղիազար վարդապետն առ վէզիրն ծանուցանել զբանն Սուրբ Երուսաղէմի. եւ ի միատեղ նստեալ կային Մարտիրոս վարդապետն ընդ Եղիազարն ի Սուրբ Նիկողոս, եւ հանապազ ի պահք շաբաթս քարոզ ասէր Մարտիրոս վարդապետն։ Եւ խորհէին Մուղնեցիքն խորհուրդ՝ թէ զի՞ա՛րդ արասցեն նոր իմն։

Եւ եկն Եշի (31 Յունուար) Յակոբն առ Եղիազար վարդապետն թէ ի՞նչ ճուղապ կու տաս, Մուղնեցին նստի՞ ի տեղս թէ ոչ։ Եւ նա ասէ. Ինձ կոծ չէ այդպիսի բանք, և թէ կ'ասես գտանել խաղաղութիւն[3]) և վասն այնր առաքեալ ես, արա՛յ եւ թէ որպէս։ Թէ զլաւն իմանաս, մինչև ես ի Բարձրահայեաց վանքն

1) հօրում. 2) քումէ. 3) խա.